



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԹԹՈՒՋՈՒՐ, ԳԵՏԻԿ ԵՎ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, 2014

Բովանդակություն

Վերլուծություն իրականացնող կառույց	3
Համայնքներ	4
Դիտարկվող գյուղերի մրցակցային առավելությունները	5
Համայնքների խմբի տնտեսության նկարագիրը	6
Անասնապահություն	6
Նախաձեռնություններ և առաջարկներ կաթի և մսի արտադրության վերաբերյալ	11
Ֆերմերներին և աջակից կազմակերպություններին	11
Արտադրողներին և աջակից կազմակերպություններին	11
Ենթակառուցվածքային նախաձեռնություններ	11
Հողագործությունը դիտարկվող համայնքներում	12
Հողագործության ռազմավարական զարգացման ուղղությունները	13
Կարտոֆիլի աճեցում	13
Հացահատիկի մշակում	14
Անասնակերի արտադրություն	15
Հողագործության զարգացմանն ուղղված նախաձեռնություններ	16
Հնարավորություններ այլ ոլորտներում	17

Վերլուծություն իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՊՈՒԿԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014թ-ի նոյեմբեր ամսին: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում, առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեչողանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

Համայնքներ

Գետիկ գետի երկարությամբ՝ Ճամբարակ-Իջևան-Դիլիջան մայրուղուն զուգահեռ, իրար հարևանությամբ գտնվող Թթուջուր, Մարտունի և Գետիկ համայնքները ունեն միանման տնտեսություններ, որոնց հիմքում ընկած է անասնապահությունը և հողագործությունը:

Համայնքները շրջապատված են ալպիական մարգագետիններով և անտառներով: Ունեն մեծաքանակ տեսարժան վայրեր՝ բնության գրավիչ տեսարաններ և սառնորակ աղբյուրներ, 11-րդ դարի «Հին Գետիկ վանքը», «Բերդ» ամրոցի ավերակներ, հուշարձան կոթող- աղբյուրներ, 12-րդ դարի խոնարհված եկեղեցի, «Մուղնի խաչ» խաչքարերի համալիրը, «Թթուջուր» հանքային ջրի աղբյուրը և այլ տեսարժան վայրեր:

Մարդիկ աշխատասեր են, բաց՝ համագործակցության համար: Զբաղվում են հիմնականում անասնապահությամբ, վերջին տարիներին սկսել են նաև մասամբ մշակել հողատարածքները՝ ցանելով հիմնականում կարտոֆիլ և հացահատիկ: Մեծ է համայնքներից արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:

Ստորև ներկայացված են համայնքների վերաբերյալ հիմնական տեղեկությունները.

	Թթուջուր	Գետիկ	Մարտունի
Բնակչություն	1070	465	587
Խոտհարք (հա)	429	800	215
Արոտավայր (հա)		2500	400
Վարելահող(հա)	649	400	208
որից՝ ջրովի (հա)	-	-	-
Ցանվող կուլտուրաներ(հա)	60	22	30
Խոշոր եղջերավոր անասուններ	1381	502	720
որից՝ կով	843	312	480
Մանր եղջերավորներ	852	511	550
Կոմբայներ	-	1	-
Տրակտորներ	3	7	4
Բեռնատարներ	10	13	11

Դիտարկվող գյուղերի մրցակցային առավելությունները

Ստորև ներկայացված են երեք համայնքների մրցակցային առավելությունները.

- Տարածաշրջանում առկա են պանրի արտադրության փոքր ձեռնարկություններ, որոնք կարող են հաջողված նախադեպ հանդիսանալ այս գաղափարների կրկնության համար:
- Անասնապահության զարգացման համար առավելություն է հեռագնա արոտների և խոտհարքերի մեծ քանակության առկայությունը:
- Համայնքների անդամները և համայնքապետերը, հանուն համայնքների տնտեսությունների զարգացման, պատրաստակամ են համագործակցել աջակից կառույցների հետ:
- Այս տարածաշրջանի բնակլիմայական պայմանները էապես տարբերվում են Գեղարքունիքի մարզի այլ տարածքներից: Տարածաշրջանում հնարավոր է աճեցնել խոնավասեր բույսեր:
- Տարածաշրջանի բնակչությունը հակված է համատեղ գործողությունների և փոփոխությունների:
- Համայնքներում առկա են մի շարք տեսարժան վայրեր և պատմամշակութային համալիրներ:

Համայնքների խմբի տնտեսության նկարագիրը

Անասնապահություն

Անասնապահությունը ավանդական ճյուղ է այս գյուղերի համար և ներկայացվող երեք համայնքների տնտեսության մեջ: Հատկապես զարգացած է խոշոր եղջերավոր անասնապահությունը:

Գյուղերի բնակչության գրեթե 95% -ը զբաղվում է անասնապահությամբ: Տնտեսությունների մեծամասնությունը ունի մեկ-երկու գլուխ կով, բայց կան նաև մեծ անասնապահական տնտեսություններ:

Երեք համայնքների անասնագլխաքանակը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 2. Անասունների գլխաքանակը

	Թթուջուր	Գետիկ	Մարտունի
Խոշոր եղջերավոր անասուններ	1381	502	720
որից՝ կով	843	312	480
Մանր եղջերավորներ	852	511	550

Ստորև ներկայացվում է անասունների բաշխվածությունն ըստ անասնապահական տնտեսության մեծության:

Աղյուսակ 1. Անասնապահական տնտեսությունների չափերը (խոշոր եղջերավոր անասնապահություն)

Դասակարգում	Տնտեսությունների թիվ	Անասնագլխաքանակ
Խոշոր ֆերմերներ	15	30 և ավել գլուխ
Միջին ֆերմերներ	38	10-30 գլուխ
Փոքր ֆերմերներ	370	1-10գլուխ

Մինչև 10 գլուխ անասուններ ունեցողները անասունների պահքը կազմակերպում են համայնքներում, իսկ ավելի շատ ունեցողները ամառվա սեզոնին տանում են նաև հեռագնա արոտներ: Հեռագնա արոտներում անհրաժեշտ է անձրևից ու ցեխից պաշտպանող բացօթյա ծածկ, որտեղ անասունների պահքից բացի կիրականացվի նաև կթի գործընթացը: Կարևոր դերակատարում կունենա խմոցների տեղադրումը. անասունները երկար չեն քայլի ջուր խմելու համար և կաթ չեն կորցնի: Անհրաժեշտ է նաև այս տարածքները էլեկտրաէներգիայով ապահովել, որպեսզի ֆերմերները կարողանան կազմակերպել էլեկտրական սարքավորումով կիթ և հոգան սեփական կարիքները:



Կաթի իրացման արժեքային շղթան

Կովերի կաթնատվությունը ցածր է: Մեկ կովի միջին կաթնատվությունը տարեկան մոտ 1500– 1800 լիտր է: Կաթի մի մասը (մոտ 20 %) գյուղացիները օգտագործում են սեփական կարիքների բավարարման համար և արտադրում են պանիր, իսկ մյուս մասը հանձնում են մեկ լիտրը 130-140 դրամով (ձմռան ամիսներին հասնում է մինչև 170 դրամի): Հիմնական մթերոլը «Աշտարակ կաթ» ընկերությունն է:

Արտադրված պանիրը վաճառում են միջնորդ վերավաճառողների և հիմնական հաճախորդների: Վաճառքի գինը 1400 – 1600 դրամ է 1 կիլոգրամի համար: Համայնքներում կան մարդիկ, ովքեր պատրաստ են զբաղվել պանրի ու այլ կաթնամթերքների արտադրությամբ և արդեն լուրջ քայլեր են իրականացրել այդ ուղղությամբ:

Աղյուսակ 3. Կաթի արտադրության շահութաբերության հաշվարկը 10 կով¹ ունեցող տնտեսության դեպքում:

1	Ստացվող կաթ	1 600 լիտր x 10 = 16 000 լիտր
2	Կաթի վաճառքից եկամուտ	16 000 x 160 = 2 560 000 դրամ
3	Հորթի վաճառք	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ
4	Ընդամենը՝ եկամուտ	= 2 880 000 դրամ
5	Ծախսեր	= 1026 000 դրամ ²
6	Շահույթ	= 1 854 000 դրամ

Կաթի արտադրության մեջ նոր տեխնոլոգիաներ հիմնականում չեն կիրառվում: Աստիճանաբար ներդրվում են կթի ավտոմատ համակարգերը: Արհեստական սերմնավորման գծով քայլեր կատարվել են, սակայն արդյունքները չեն բավարարել: Պանիրը հիմնականում արտադրում են տնային պայմաններում և օգտագործում ավանդական տեխնոլոգիաներ: Արտադրության պայմանները չեն բավարարում որակի ստանդարտներին: Այդ պատճառով պանրի մեծ մասը վաճառվում է գյուղում կամ մոտ քաղաքներում ապրող բարեկամներին կամ հարևաններին:

Տնական պայմաններում արտադրված պանիրը հիմնականում չի փաթեթավորվում, անվանում չունի:

¹ 10 կովը մինիմալ գլխաքանակն է, որից հետո միայն տնտեսությունը սեփական եկամուտներով կարող է ընդլայնվել՝ միաժամանակ բավարարելով ընտանիքի նվազագույն ծախսերը:

² Ֆերմերի անմիջական մասնակցությունը խոտհարքի գործընթացին, եթե առկա է սեփական գյուղ. մեքենա, կթի և այլ գործողություններում մոտ 40%-ով նվազեցնում է ծախսը: Ծախսերի մեջ ներառված է նաև հիմնական միջոցների ամորտիզացիան:

Աղյուսակ 4. Պանրի արտադրության շահութաբերության հաշվարկը 10 կով ունեցող տնտեսության դեպքում:

1	Ստացվող կաթ,	16000 լիտր
1.01	Պանրի ստացում	2285 կգ
1.1	Պանրի վաճառքից եկամուտ	2285 x 1500 = 3 427 500 դրամ
2	Հորթ	8 հատ
2.1	Հորթի վաճառք	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ
3	Ընդամենը՝ եկամուտ (1 + 2)	= 3 747 500 դրամ
4	Ծախսեր	= 950 000 դրամ
5	Պանրի արտադրության լրացուցիչ ծախսեր(տնային պայմաններում արտադրություն)	= 250 000 դրամ
6	Շահույթ	= 2 547 500 դրամ

Մսի իրացումը

Տնտեսություններն հիմնականում կախման մեջ են մթերոդներից, ովքեր մեծամասամբ այլ համայնքներից են: Մինչև վերջերս միսը կողքի համայնքներից ընդունել է Վահան համայնքի սպանդանոցը, որը այս պահին գրեթե չի աշխատում: Մսավաճառների կողմից մթերման գները հետևյալն են.

- Կով– 1200 - 1500 դրամ,
- Ցուլ– 1 900 –2000 դրամ,
- Վնասված կենդանի500 - 1200 դրամ,

Ստորև աղյուսակում ներկայացված է մսի արտադրության ծախսերի և եկամտի համեմատական հաշվարկը:

Աղյուսակ 4. Մսի արտադրության ծախսերի և եկամտի հաշվարկ (տավար, ոչխար, խոզ)

1	Անվանումը	Խոզ	Բսվող հորթեր	Ոչխար
2	Օպտիմալ տնտեսություն՝	30 հատ երկու ամսեկան գոճի	20 հորթ	100 ոչխար
3	Ստացվող արդյունքը միավորից	40 կգ յուրաքանչյուր ամսեկան խոզից	200 կգ միս վեց երկու տարում	1 գառ
4	Ընդհանուր արդյունքը	1200 կգ միս	4000 կգ միս	100 գառ
5	Մեկ միավորի մեծածախ գինը	3000 դրամ մեկ կիլոգրամ խոզի միսը	1900 դրամ մեկ կիլոգրամ միսը	1 գառը 40 000
6	Ստացվող եկամուտը ('4'x'5')	3 600 000	7 600 000	4 000 000
7	Անհրաժեշտ ծախսերը	1 250 000	2 400 000	1 400 000
8	Շահույթ	2 350 000	5200 000 - 2 տարվա համար 2 600 000	2 600 000

Տավարի մսի արտադրությունը տարածաշրջանում արդյունավետ է, եթե տնտեսությունը ավելի քան 20 գլուխ ցուլիկ է բուծում, ինչպես նաև արտամտությամբ շրջանում ցուլիկները պահում է հեռագնա արտոներում: Այս կերպ տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունների մոտ 30%-ը զբաղվում է տավարաբուծությամբ: Տավարի մսի արտադրության ծավալները կավելանա, եթե հեռագնա արտոներում մարդիկ ապահովվեն էլեկտրաէներգիայով:

Տարիներ առաջ համայնքում տարածված հիվանդությունների հետևանքով խոզաբուծությունը մեծ վնասներ է կրել, և մարդիկ դադարել են զբաղվել դրանով: Ներկայումս խոզաբուծությունը իրականացվում է փոքր քանակներով և մտուրային պայմաններում: Խոզի մսի գինը ներկայիս պայմաններում, համեմատած կատարվող ծախսերին, ցածր է, և մարդիկ պատրաստ չեն ներդրումներ կատարել այդ ոլորտում:

Մսի արտադրությունը վերջին տարիներին զարգացած է եղել՝ կապված Վահան համայնքի սպանդանոցի աշխատանքային ծավալի հետ: Ներկայումս սպանդանոցը չի գործում, իսկ մսարտադրության ծավալները չեն աճում:

Նախաձեռնություններ և առաջարկներ կաթի և մսի արտադրության վերաբերյալ

Ֆերմերներին և աջակից կազմակերպություններին

- պահքի և խոտի հավաքման գործընթացների հնարավորինս ավտոմատացման աջակցություն,
- գյուղտեխնիկայի ձեռքբերման աջակցություն,
- արհեստական սերմնավորման լայնածավալ կիրառման աջակցություն, խորհրդատվություն,
- կովերի լիակթման աջակցություն, իրազեկում,
- կերային կուլտուրաների աճեցման աջակցություն :

Արտադրողներին և աջակից կազմակերպություններին

- Մսամթերքի և կաթնամթերքի արտադրության փոքր արտադրամասերի հիմնման աջակցություն՝ տեխնոլոգիական, տեխնիկական, որակի, փաթեթավորման, շուկայի առաջնդման և ֆինանսավորման ուղղություններով:

Ենթակառուցվածքային նախաձեռնություններ

- Համայնքներում անասունների խմելու ջրագծերի վերանորոգման և խմոցների տեղադրման օժանդակություն,
- հեռագնայում անասուններին անձրևից պաշտպանող ծածկի կառուցում,
- Թթուջրին պատկանող գյուղասարքավորումների համար ծածկի կառուցում,
- գյուղերում նոր գյուղտեխնիկայի ձեռքբերման և հների թարմացման աջակցություն:

Հողագործությունը դիտարկվող համայնքներում

Մոտ 1200 հեկտար վարելահողից գյուղերում այս պահին մշակվում է 50 հեկտարը, որտեղ ցանվում է հիմնականում կարտոֆիլ և հացահատիկ այն դեպքում, երբ մոտ 20 տարի առաջ համայնքներում անմշակ հող չի եղել:

Հողերի սեփականաշնորհումից հետո, երբ մարդկանց մի մասը սկսեց բարեկեցիկ կյանք փնտրել այլ ոլորտներում և արտերկրում, հողերը սկսեցին չմշակվել՝ հետզհետե կոշտանալով և վերածվելով խոտհարքերի ու արոտավայրերի:

Այժմ, երբ անասնապահությունը կայուն տեմպերով զարգանում է գյուղերում, և անասունների գլխաքանակը մոտենում է գյուղերում եղած լավագույն ցուցանիշներին, հողագործության զարգացումը էլ ավելի արդիական է դառնում:

Հողագործության զարգացումն ունի արմատական կարևորություն թե՛ անասնապահության զարգացման (լրացուցիչ կերերի արտադրություն) և թե՛ բնակչության եկամտի աճի համար:

Հողագործության զարգացման պասիվ տեմպը, համեմատած անասնապահության հետ, հիմնականում պայմանավորված է մշակող գյուղտեխնիկայի բացակայությամբ, ինչը երեք համայնքներում էլ համարվում է ռազմավարական կարևորության խնդիր: Հիմնականում խոսքը գնում է թրթուրավոր տրակտորի մասին, որը միակ հնարավոր արդյունավետ լուծումն է երկար տարիների ընթացքում չմշակված հողերի վարը կազմակերպելու համար: Առկա հիմնականում Բելառուս մակնիշի անիվավոր տրակտորները չունեն անհրաժեշտ հզորություն՝ այդ հողերը որակյալ վարելու համար:

Բոլոր գյուղերը փորձում են այս խնդիրը լուծել հնարավոր միջոցներով: Մասնավորապես, Մարտունի գյուղում փորձում են վերանորոգել վատթար վիճակում գտնվող ΔT մակնիշի տրակտորի անվաթրթուրները, Թթուջուր համայնքում փորձում են գտնել անհրաժեշտ ֆինանսավորում թրթուրավոր նոր տրակտորի և կից սարքավորումների գնման համար:

Հողի որակյալ վարի կազմակերպման դեպքում բնակիչները պատրաստ են մշակել վարելահողերը և առաջին տարում արդեն մշակվող հողատարածքները 50-ից կդառնան մոտ 300 հեկտար, որտեղ կցանվեն կարտոֆիլ, ցորեն և գարի: Այս մշակաբույսերը ավանդապես ցանվել են բնակիչների կողմից, առկա է մշակման փորձ:

Բացի գյուղտեխնիկայից, հողագործության զարգացման երկրորդ արմատական խնդիրը սեփականաշնորհման ժամանակ հողերի մասնատումն է: Հողերը մինչև կես հեկտար տարածքով սեփականաշնորհվել են տարբեր տնտեսությունների կողմից, որոնց մի մասը այժմ չի մշակում հողը և ապրում է արտերկրում: Նմանատիպ հողատարածքները խնդիր են առաջացնում հողատարածքների համընդհանուր մշակման դեպքում:

Հողագործության ռազմավարական զարգացման ուղղությունները

Մոտ ապագայում հողագործությունը համայնքներում կարող է զարգանալ կարտոֆիլի, հացահատիկի և անասնակերի աճեցման ուղղությամբ, քանի որ առկա է վերը նշված բույսերի աճեցման փորձ, և հողերը որակական հատկանիշներով համապատասխանում են տվյալ բույսերի աճեցմանը:

Կարտոֆիլի աճեցում

Ավանդապես այս համայնքներում աճեցվող մշակաբույս է: Հիմնականում աճեցվում է անջրդի հողերում, բերքատվությունը 15 -20 տոննա / հեկտար է: Բերքատվությունը մոտ է ՀՀ միջին բերքատվությանը, զիջում է առաջատար մարզերին և համայնքներին:

Որակյալ բերքը վաճառվում է հիմնականում վերավաճառողներին և փոխանակվում կենցաղային ապրանքների, մրգերի և այլ բանջարեղենների հետ: Բերքի ոչ որակյալ մասը օգտագործվում է որպես անասնակեր:

Ստորև ներկայացված են 1 հեկտար հողատարածքում կարտոֆիլի մշակման համար անհրաժեշտ ծախսերը և շահութաբերությունը:

	Կարտոֆիլ
1 հա-ից ստացվող միջին բերքը, կգ	18 000
Իրացում	14 000
1 կգ-ի միջին մեծածախ գինը (2014թ)	200
1 հա-ից ստացված եկամուտը ('1'x'2')	2 800 000
1 հա-ի վրա կատարված ծախսերը	1 200 000
Շահույթ	1 600 000

Հացահատիկի մշակում

Ցորենի և գարու աճեցումը համայնքներում նույնպես հողագործության ավանդական ճյուղերից է: Մեկ հեկտարից ստացվում է մոտ 2.5 տոննա բերք, որը բավականին արդյունավետ ցուցանիշ է: Գետիկ համայնքում կա նոր կոմբայն, ինչը կարող է ապահովել որակյալ բերքահավաք երեք համայնքների համար:



Ստորև ներկայացված է շահութաբերության հաշվարկը ցորենի մեկ հեկտարի հաշվարկով:

	Ցորեն
1 հա-ից ստացվող միջին բերքը, կգ	2500
1 կգ-ի միջին մեծածախ գինը (2014թ)	160
1 հա-ից ստացված եկամուտը ('1'x'2')	400 000
1 հա-ի վրա կատարված ծախսերը	160 000
Շահույթ	240 000

Ցորենը հիմնականում կերակրում են անասուններին, ինչպես նաև օգտագործում սեփական սպառման այլուրի ստացման համար:

Ցորենի լայնածավալ մշակումը թույլ կտա նաև վաճառել հացահատիկը, ինչը կապահովի լրացուցիչ եկամուտ համայնքների բնակիչների համար:

Անասնակերի արտադրություն

Դեռևս խոսքը գնում է ոչ թե սիլոսային կերերի, այլ ցանովի խոտհարքերի մասին, որոնք բավականին արդյունավետ են անասնապահության մեջ լիակրթում ապահովելու համար:

Բազմալյա խոտաբույսերի մշակումը արդյունավետ է թե՛ ստացվող բերքի քանակի, թե՛ որակական հատկանիշների առումով:

Կերի տեսակը	Բերքատվությունը (g/հա)	Ընդամենը կերամիավոր (g)
Առվույտի խոտ	75	39
Կորնզանի խոտ	65	35
Վարսակի խոտ	40	19.2
Բնական խոտ	18	8.1

Ինչպես երևում է վերը նշված աղյուսակից, վարսակը, կորնզանը և առվույտը ապահովում են ինչպես մի քանի անգամ շատ բերք, այնպես էլ մեկ միավորի հաշվարկով 2.5 – 5 անգամ ավելի մեծ թվով կերամիավորներ:

Առվույտի և կորնզանի ցանքը հիմնականում կատարվում է գարնանացան հացահատիկների հետ: Առաջին տարում ստացվող բերքը փոխահատուցում է կատարված ծախսերը և սկսած երկրորդ տարվանից՝ խոտադաշտերը կատարված ծախսերի ցուցանիշներով գրեթե հավասարվում են բնական խոտհարքի վրա կատարված ծախսերին՝ միևնույն ժամանակ ապահովելով 3-4 անգամ բարձր բերքատվություն և կերամիավորների քանակ:

Խոտի հավաքման ծախսերի համեմատական ցուցանիշներ(չի ներառում տեղափոխումը)

Տեսակը	Բերքատվությունը g/հա	Հավաքման ծախսերը հա/դրամ	Այդ թվում				1 կգ խոտի հաշվով կատարվող ծախսը	1 հակի (20կգ) հաշվով կատարվող ծախսը
			Խոտհունձ	Փոցիս	Հակավորում	Այլ		

Առվույտ	75	127500	30000	10000	67500	20000	17	340
Կորնզան	65	118500	30000	10000	58500	20000	18	365
Վարսակ	40	96000	30000	10000	36000	20000	24	480
Խոտհարք	18	57200	20000	7000	16200	14000	32	636

Հողագործության զարգացման նուղվածնախաձեռնություններ

- Գյուղտեխնիկայի և պահեստամասերի ձեռքբերման աջակցություն (թրթուրավոր և անիվավոր տրակտորներ, կից սաքավորումներ),
- որակյալ կարտոֆիլի, հացահատիկի և բազմամյա խոտաբույսերի սերմերի ձեռքբերման աջակցություն,
- զարնանը կարճաժամկետ ֆինանսական աջակցություն՝ հողագործության ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Հնարավորություններ այլ ոլորտներում

Երեք համայնքներն էլ շրջապատված են ալպիական մարգագետիններով և անտառներով, որոնք անտառային հատապտղի և դեղաբույսերի մեծ պաշար են: Գյուղերում տարածված է հատապտղի հավաքումը տնական օդու պատրաստման (հիմնականում՝ վայրի տանձ), ինչպես նաև փոքրածավալ վաճառքի համար:

Առկա է հատապտուղների հիման վրա մուրաբաների և հյութերի արտադրության փոքր արտադրամասերի ստեղծման հնարավորություն: Ինչպես նաև համայնքներում կարող են աշխատել խոտաբույսերի հավաքման և չորացման փոքր ձեռնարկություններ:

Շնորհակալություն ենք հայտնում համայնքների ղեկավարներին և տեղական թիմի անդամներին, ծրագրի իրականացմանն աջակցման համար:

